

Հոռաբույս

6848

ԲՈՒՄԻՆԱԿԱՆ ԵՐ

ԺԱՆՐ.

891.99

Ա-92

1918

ԱՐՇԱՐՈՒՆԻ

ԸՄԲՈՍՏԱՑՈՒՄԻ ԺԱՄԵՐ



Նոր-Նախիջևան
Տպարան Ս. ԱՐԱԳԵԱՆԻ
1918.

891.542-1

Ա-92

2011

52003

891. 99

Ա - 92

կր.

ԱՐԶԱՐՈՒՆԻ

1010
40372

9

ԸՄԲՈՍԱՅՈՒՄԻ ԺԱՄԵՐ

121



Նոր-Նախիջևան
Հայրենի Ս. ԱՆՔԱՏԱՆԻ
1918.



ԻՊԷՆԼԻՆ

Դու լոյսերի անմեղութեան գանձաբան,
Յաւերժական ձգտումների սրունդ
Բարձր ուղի,

Աստղածնների և բազինի գրօղակ,
Որ անփութօրէն հողուս մէջ
Կծածանիս...

Երազների և աղօթքի անասղ բողբին՝
Ուղեղնածին, անձեռնակերտ մարմինների
Կառուցւածք,

Աստղածնունդ և մարմարիտն բարձրունք-
ներիդ

Կուզէ հողիս սիրտն իր այլոց
Խնայ նման:

Անժանութեան ոգիների կիրակի,
Վե՛հ բարձրունքներ թեոզ հողու շուշան.
Կազուրների վրա թառած ծիածան,
Հողուս թէին կապէ նարթա

Գոհարների պերճութեամբ:

Ճանաչների բերեղացայտ յառակ ծորակ,

Գաղափարների անսպառ ժայթքող

Քո ոլոռակոյտ աղբիւրից՝

Մաքիս կաթէ, այրող կեանքի

Հրդեհների մէջ կիզացած

Տունկի նման, կաթիլներիցդ

Զովասուն:

Անմահների մտքի գծած առապար,

Հրաշունչ փարոս տարութեբւոյ

Յուսահատ հոգիների,

Ուղեղս առ վառելու ձէթիդ տեղ

Համփարիդ մէջ

Ու երեսկայութիւնս անհատների պատրոյդ՝

Լսյալիդ ջինջ տարածելու...

Գեղեցեկի, Անհաս Բարձրի և Անհունի Հայ-
րենիք,

Անեղը մտքի ու անսահման տարածութեան

Դու Ոգի,

Մեծ Հայր հրաշատենչ երազների ու անըր-
ջանքի,

Որդիներիդ շարքն ինձ դասէ,

Հայր Զերմութեան:

Օրէնքներին խիզախող և սահմանների դա-
նակ,

Քոիշքների օթեան և ժարտիկների բոսո-
րագոյն

Յեղուկից ծնւած կարմիր լիճ

Ոսկեծածան,

Կարապ է բանականութիւնս և կնաւէ

Ծոցդ լուսածոր եղէգների թաւուաններից

Աճապարանքով:

Բռնութեան դէմ պղնձէ վահան անխորտա-
կելի,

Դարերի վեհ սլացումի սէգ նժոյգ անսանձ,

Արևների ծագման լուրն աւետող

Բոսորածին Արշալոյս շառագունած,

Քեզ կաղօթեմ բազկատարած ու ծնկաչոք

Բազինիդ առաջ

Ու կուխտեմ այսօրւանից յաւիտեան

Զահիդ զինւոր դառնալ

Աննկուն:

Ընդունէ ինձ Յաւիտենականութեան Ապա-
ռաժ:



ԾՈՒԻՐՆԵՐԻ ՎՐԱ

Հայրենիքդ իմ թշուա...

Դու մոռացւած մայր անդարձ երկունքների,
Հօր երկունքների.

Գերճաղգեստ հարս անցեալ անյուշ

Դարերի մոռացւած.

Ոյժի, Փառքի, Գեղեցկութեան և Տաղթա-
նակի

Անյայտացած սև արզանդ...

Այժմ այրի ու ոտնատակ յօշոտւած՝

Սարսափների, հուր և սրի ու աւերման,

Ենթակա, դու սև այրի անողաշտպան

Կծկեւ ես անցորդների արահետին մօտ

Ու կմուրաս՝ աղերսանք...

Մերկ, անկենդան զիակացած կմբխ,

Քեզ մօտ կգա սրդիդ տարագիր

Հէզ երզոյն իր արցունքացայտ

Վէրքդ լւալ...

Անգերեզման դու զիակ, ոսկորների թան-
գարան,

Դո ծոցդ սեցան վախից շուշաններդ յառակ

Ու մոխրոտան կարապներիդ կաթնագոյն

Փետուրներն անգթօրէն

Հրդեհներիդ ծխի մէջ:

Հայրենիքդ իմ աւերակ...

Սարսափահար արցունքներիդ ժայթքումից

Աստղերն իջան երկնքից

Դողալով,

Ու արհամարական բողոքիդ զայրոյթից

Երկինքը հազաց կայծակներ

Եւ ամօթահար կարմրեց.

Բայց մարդկային խիղճն անփոյթ

Գոցից դռներն իր հոգու

Եւ արդևանունքն աչքերի խոնարհեցրեց

Զգոյշ ու անտարբեր,

Որ անվրէպ աչքին մէջ չընկնին

Հայեացքիդ նետերն արիւնստ...

Հայրենիքդ իմ արհամարւած:

Դո ապակի ծովակների ջրերին

Եկան խառնել յեղուկն ուռառ

Բոսորաների՝

Ծոցդ ցայտող անմեղների ու սրբերի

Երակներից քամւած յեղուկն

Արեադոյն...

Դու կծպտիս հեղանքով ու կխնդաս

Արևների լոյսին մէջ,

Որ ծոցերիցդ կվազեն երկինք

Յայտնելու ոյժին զործած յաղթանակի
 Կարապետ
 Ու յաղթութեան զովքը հիւսելու...
 Դու կժպտիս անհոգութեամբ,
 Ու երեսիդ ժպտից կկաթեն թոյնի խոշոր
 Կաթիլներ,
 Որ անգունդներ կրացւի
 Ընկած տեղն անմիջապէս...
 Հայրենիքդ իմ այրուող:
 Խուժանների ու թշնամու շրթունքից
 Յամաքեցաւ, չորացաւ կաթն առատ
 Ստինքներիդ
 Եւ կրծքիդ չորաւ հպարտ ու դաժան
 Ճիրաններով մադիլեդ
 Քաղցը կմախք և մահը անկուշտ
 Յաւիտեան:
 Որբիկներիդ հայեացքն ուզղած դէպի վեր,
 Ուր կտօնէ ոյժն հսկա խրախճանք,
 Անէծք կարդաց և դարերին, մարդկութեան,
 Ու քարացաւ հայեացքն անմեղ
 Որբիկների՝ առանց կաթի
 Ու խնամքի...
 Հայրենիքդ իմ հարազատ:
 Ծրցունքների ու արիւնի գալարումից

Գրկախառն յղաց Յասումն ահադին
 Մոխրակոյտի և մաշւած
 Ոսկորների վրայ.
 Արե դարձաւ Բաղադրանքն այդ ահուկի
 Լոյս սփռելու թշնամուն՝
 Եւ բարի լոյս Աշխարհին...
 Հայրենիքդ իմ վերածնուող...



ՀԱՅԻՆ ԵՐԴԸ

Քեզ երկնեցին Աղբառութիւնն ու մոռա-
ցաւն
Արհամարանքի պալատ մօտ
Բացօթեա,
Դարբինների մրճերի հարւածներից անքաղով
Ծնունդ առար,
Երբ Անգօրի սիրտն եղաւ արիւնհաքամ
Եւ նրա կրծքի բոսորին միացան
Անքակտելի՝
Մըի, Սևի զանգւածքն իր ծորակով
Ու թշառութիւնն անողոր...
Ծնունդ առար հացին երգը զօրաւոր,
Հացին երգն ինքնածին:
Դու գեռ մանուկ քայլերով երեր,
Մահաստատ մտոր աւազանը Զայբոյթի
Մկրտէկու...
Զայն կռելու հաստաառն, անկառկած ու
անդադ,
Մարտի կանչել ահադդորդ շեփորով
Քեզ գրկողին
Եւ սրաացունց բողոքի ու կործանման
Նետեր ուղղել ահաբեկիչ ու վառահճ՝
Հացին երգը հնչել, երգը ուժեղ...

Քեզ մկրտեց ահօսը խոր Աշխատանքի
Թունաւոր,
Որ կզծւի աննկատելի մահի գրչով անարգել
Հիւժւածների, ընկածների, յաղթւածների
Ճակատին դժոխացունց քրքիջով
Ու կտանի դէպի անյայտ մոռացութեան
Մոռացում...
Անիւնների մեծաշարջ ու բոցեղէն հուրայի
Գործարանի, խրճիթի
Սրտին մէջ սնունդ առատ ծորաց անվերջ
Դանդերի և պոկւած թևերի յեղուկից,
Ու սալերի, ապարանի, նկուղի
Սեռթեամբ բազուկդ արձակ շարժեցիր
Հաստատուն՝
Եւ կրծքիդ տակ բացւեցին արեան
Վարդեր բուրալի,
Թորախտաւորի այտին ծաղկած
Կարմրեց...
Մերենայի շառաչին,
Որ կպատմէ կեանքի Անհաւասարութեան
Գրքից էպիգոտ,
Դու ձայնեցիր անդրանիկ թոթովանքդ—
Աղերսող, երերուն՝
Եւ ապա—

Դազադներն անտառից, յաղթածների սա-
ռած

Շրթունքներից պոկեցիր

Շունչը բեկբեկ, մաշւած

Ու հնչեցիր պայքարի բարձրագոյնը,
Համարձակ՝

Երգը հացի, հացին երգը զօրաւոր:

Վրէժն անբուն քո դայեակը դարձաւ

Օրօրոցիդ մօտ աշալուրջ ու հսկող,

Քեզ օրօրեց ըթին տակ մրմրալով

Դաւանանքը նոր կեանքի

Եւ վերածննդեան...

Մանուկ էիր՝

Մեծացար դայակիդ կտակը անբաժան

Կրծքիդ տակ ունենալով,

Որ ձայնես որսո մարդկութեան և Ոյժին

Լպիշտ զէմքին—

Երգդ՝ կայծակ, երգդ՝ որսո,

Հացին երգը վրիժառու...

Դու ծաղկեցիր յօշոտւածի, զրկւած ի շր-
թունքին

Անէծքի հետ անբաժան

Հնչեցնելու համար վերածննդի փողը յատակ

Արկների ու արիւնի գնեցով՝

Երգդ վսեմ, երգն անսպառ—

Սև հացին...

Դու կշրջես հիմա վստահ, աներկիւզ՝

Հացին երգը,

Երգը կործանման ու աւերման

Ոչնչացնող,

Երգը նոր-կեանքի ու նոր լոյսի

Աւետարեր:

Հազարաւոր, բիւրաւոր և անհամար

Հողինների և արիւնի

Մոռնո՞ւ դարձար անփոխարինելի,

Որ կկանչէ մարտի, կուր

Լեզուով իր Մարգարէական:

Հացին երգը կպոռթկա հուժկու տեմպով՝

Ու կսպառնա կործանում անօրինակ

Իրեն զսպող Ոյժին, Նիւթին բռնակալ,

Որին աւեց կաթն իր առատ արեան հետ

Գլխառատ մօր նման...

* * *

Դու հացին երգ,

Նոր Հիմն մարդկութեան և Դարերի,

Վերածննդի Արշալոյս,

Կեանքի հաւասարութեան Բազին,

Եւ քեզ կերպեմ...

ՊԱՅՆՈՒԹԵԱՆ ՈՎՈՐՆԵՐ

Դու նախանձի, իշխանութեան թագունի
Տենչածարաւ,
Տապալումի, Հպարտացման, գերիշխելու
Մարմապում անմրցելի
Ու հակայական.
Հզօրին տիրելու, սարկացնելու Ոյժին
Եւ բարութիւնը խեղդող
Ներոն վայրադ...
Կործանումի, Աւերների, Ոչնչացման, Աւարի
Մանձաղեղծ ոյժերի Մայր,
Դու շինեցիր բոյնդ արիւն մարդու սրտին
Յարակից՝ անբաժան,
Երբ Արէյն ընկաւ անմեղ արիւնշաղաղ,
վիրապալալ

Ձեռքից եղբայրասպան

Անգութօրէն:

Հատատեցիր վրանդ հիմնաւորապէս աներ-
կիւղ

Մարդու սրտի, մարդու հոգու

Խորանում փառածաւալ:

Դանդից, սակօրներից մարդկան և գիականներից

Կենդանու և շնչաւորի կառուցող

Դու մեծ վարպետ անգրիազօրծ անհաւասար

Հսկայական բուրգերի և սարերի

Արիւնտկերտ...

Հրդեհների, արևների, հուր և կրակի

Անհուշտ պատճառաւ.

Անյաղ վայրի թրջող,

Անշէջ՝ անթեղ,

Ծարաւ լոյսի և բոսորի՝

Անթրոց:

Արդարութեան, Լոյսի, ընկերութեան,

Եղբայրութեան, երջանկութեան

Ժանր դժխեմ ու անգութ,

Դէմքով գայրոյթ, անաւոր և սաքսափեցնող.

Մահ կթընես մոսիններիդ բերանից անեղ-
նադող,

Հաւարութեամբ բերկրալի,

Եւ կամքովդ եղծանիւ՜ զիտակցող

Մահաբլբիշ կոռնաս թնդանօթիդ երախից

Շառաչունով նուա երկաթ...

Հրանօթիդ շնչերով բուրվաղ խեղթող

Կրաքճրանա յայտնելու քեզ՝

Մեծդ Կործանիւ՜ Ողբ,

Տաղթանակդ փառաւոր, ներփողդ երգելու

Ընկածների շրթունքից:

Եւ Նիզակիդ, Դաշոյնիդ և Աշտէիդ, Ծրիդ

Ծայրերի սրութեամբ կփայլես հաճոյքով

Ժպիտովդ Ժպիրն,

Երբ կզլորէ դէպի անյայտ Անյայտութիւն՝

Եղբայրն եղբօր, հայրն՝ որդուն,

Մոռն իր զաւակին...

Դու եւ Հզօր և Բռնակալ անկաթծան,

Հաւարաութիւն, Ոյժի, Նիւթի տնօրէն

Անընկճելի.

Կեանքի, մահի, կործանումի, վերածննդի,

Անդարձ ժողացման, բարձրանալու
 Անախ մարտկոց...
 Արիւնների, ոսկորների, գանգերի և կմախքի
 Անթև ուրուր,
 Դու միշտի՛ Տէր, անտապալ՝ Զօրութիւն,
 Անխորտակ Տեափանութիւն անվախճան,
 Անուրբ Ոճիրների մայր Եղեռնի,
 Պայքարների՝ Միապետ,
 Արդարութեան և խղճի, խօսքի
 Մագիլ անբանալի...
 Դու ես ասուածը մարդկութեան,
 Դու ես խիղճը խղճերի,
 Մեծ զարկերակը թայնի, օձերի և լեղիի...

* * *

Ես կանխեմ քեզ անսահման բարկութեամբ,
 Եղբայրութեան, Ազատութեան անունից.
 Խղճի, հոգու ձգտումների անունից...
 Դու ես բախար, դու ես սև բախն աշխարհի՛
 Ես կանխեմ քեզ իմ ամբողջ էութեամբ...
 Ես կանխեմ անմեղների թափուած արեամբ,
 Որբիկների անվերջ քառուած արցունքով,
 Սյրածների հայեացքովը կենսածառաւ,
 Որդեկորոյս մայրերի ստինքներով չորացած,
 Ես կանխեմ, ու կանխեմ անզաղաք՝
 Քեզ՝ Ոյժի, Նիւթի, Տիեզերքի
 Թագուհի...

1918 թ.
 Ն.-Նախիջևան



6848

ԳԻՆՆ Է 1 ՐՈՒԲ.

ԴՐՄԵԼ՝ Нахичевань н-Д. 5 линія № 23.

2013

